

ԱՅՍ Ի ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԹՕԻԱԹԵՑԻ
ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՈՐ ԷՐ ՍԱՀԷԹՃԻ ԵԿ
ԵԱԼ Ի ՀՌՈՎՄ ՎՃԱՐՑ ԶԿԵԱՆՍ ԻԻՐ Ի ԹՎԻՆ
ԲՍԻ

ՌԷՃԼԱ ԵՒ ՀԱՅՈՑ ՌՃԶ ՕԳՈՍՏ. ԺԸ. Ի

Թարգմանութիւն լատին տապանագրին՝ «Տ.
Ա. Մ. — Ընդ քարամբս հանգչի Սարգիս
Գասպարեան — Հայ Եպիսկոպոս Բեթղեհեմի
— հանգեաւ յ18դ աւուր Աւգոստոսի, յա-
մին 1731. — Հարիւր (ամաց) կենաց իւրոց»,

Իր անբաժան աշակերտը տիրացու Սի-
մէոն իրմէ յառաջ վախճանած եւ նոյնպէս նոյն
եկեղեցին թաղուած է ի Հոռմ՝ 16 Յունուար
1729, որուն տապանագիրը հրատարակած եմ
Սարգիս Արքեպ. Սարաֆեանի կենսագրութեան
մէջ (Վիեննա 1908, էջ 297), ուր խօսքն
երկմիտ ըլլալուն՝ Սարգիս Եպ. Խաբլանեանի
վերագրելի համարած էի: